Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի հուլիսի 23-ի «Հայաստանի Հանրապետության պետական հանրակրթական դպրոցների սեյսմիկ անվտանգության բարելավման 2015-2030 թվականների ծրագիրը հաստատելու մասին» N 797-Ն որոշման մեջ կատարել հետևյալ լրացումները և փոփոխությունը՝

1) որոշման 1-ին կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 3-րդ ենթակետով.

«3) Հայաստանի Հանրապետությունում Սեյսմիկ անվտանգության բարելավման ծրագրի շրջանակներում կառուցվելիք կամ ամրացվելիք դպրոցների ցանկը՝ համաձայն N 3 հավելվածի:».

2) որոշման N 1 հավելվածի ամբողջ տեքստում «423» թիվը փոխարինել «425» թվով.

3) որոշման N 2 հավելվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 424-րդ և 425-րդ կետերով.

«

424.	Երևան	Աջափնյակ	ք. Երևանի թիվ 185 հիմնական դպրոց	Համայնքային	հիմնական դպրոց (1-9-րդ դասարաններ)
425.	Երևան	Նուբարաշեն	ք. Երևանի Ղևոնդ Ալիշանի անվ. թիվ 95 միջնակարգ դպրոց	Համայնքային	միջնակարգ դպրոց (1-12-րդ դասարաններ)

».

4) որոշումը լրացնել նոր՝ N 3 հավելվածով՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը: